«ՌՈԲՈՏՆԵՐԸ և ՄՄԻ-Ն» ԹԵՄԱՅՈՎ

ԷՍՍԵՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

Աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը՝ 30-ը հունիսի, 2021 թ.

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) հայտարարում է **«Ռոբոտները և ՄՄԻ-ն»** թեմայով էսսեների մրցույթ միջազգային մարդասիրական իրավունքով հետաքրքրված անձանց և հետազոտողների համար։

Տարեցտարի զինատեսակներն ավելի են կատարելագործվում, իսկ պատերազմ վարելու մեթոդները՝ ավելի բազմահնար դառնում։ Տասնամյակներ շարունակ պետություններն ու փորձագետները բանավիճում են զինտեխնիկայի շեշտակի զարգացմամբ ու զինված հակամարտությունների ժամանակ տեխնոլոգիաների կիրառմամբ պայմանավորված մարտահրավերների շուրջ, և թե ինչպես կարող են Ժնևի կոնվենցիաները և դրանց լրացուցիչ արձանագրություններն արձագանքել այդ մարտահրավերներին։

Հաշվի առնելով խնդրի արդիականությունը և ՄՄԻ նորմերի ամրապնդման ուղղությամբ հետագա ջանքերի անհրաժեշտությունը՝ ԿԽՄԿ-ն հրավիրում է ակադեմիական և փորձագիտական համայքնին մասնակցելու «Ռոբոտները և ՄՄԻ-ն» թեմայով էսսեների մրցույթին։

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ուղարկել աշխատանքները կազմկոմիտեի էլ.հասցեին մինչև ս.թ. հունիսի 30-ը (ներառյալ)։ Մրցույթի շրջանակներում դիտարկվելու են միայն անհատական աշխատանքները. թիմային աշխատանքները չեն ընդունվելու։

Ս.թ. սեպտեմբերի 1-ին հայտարարվելիք մրցույթի արդյունքերի հիման վրա նախատեսվում է հաղթողների պարգևատրում տարբեր լեզվական բաժիններում և անվանակարգերում։

Լավագույն աշխատանքները որոշելիս առաջնահերթ հաշվի են առնվելու գաղափարների օրիգինալությունը, միջազգային մարդասիրական իրավունքի իմացությունը և փաստարկման կարողությունը։

«ՌՈԲՈՏՆԵՐԸ ԵՎ ՄՄԻ-Ն» ԹԵՄԱՅՈՎ

ԷՍՍԵՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

ԲԱԺԻՆ 1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 1. ««Ռոբոտները և ՄՄԻ-ն» թեմայով էսսեների մրցույթի (այսուհետ՝ «Մրցույթ») կազմակերպիչն է Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) (այսուհետ՝ «Կազմակերպիչ»)։

Կազմակերպիչը կարող է իր հայեցողությամբ ընդգրկել արտաքին փորձագետների՝ Մրցույթի իրականացման և մրցութային աշխատանքների գնահատման համար։

Հոդված 2. Մրցույթի շրջանակներում սահմանվում են հայերենի, ռուսերենի, ուկրաիներենի, ադրբեջաներենի, ղազախերենի, ղրղզերենի, ուզբեկերենի, թուրքմեներենի և տաջիկերենի բաժիններ։ Բաժինների համակարգողներն են՝

- Հայերենի բաժին՝ Հայաստանում ԿԽՄԿ պատվիրակություն
- Ռուսերենի բաժին՝ Ռուսաստանի Դաշնությունում, Բելառուսում և Մոլդովայում ԿԽՄԿ տարածաշրջանային պատվիրակություն
- Ուկրաիներենի բաժին՝ Ուկրաինայում ԿԽՄԿ պատվիրակություն
- Ադրբեջաներենի բաժին՝Ադրբեջանում ԿԽՄԿ պատվիրակություն
- Ղազախերենի բաժին՝ Ղազախստանի Հանրապետությունում ԿԽՄԿ առաքելություն
- Ղրղզերենի բաժին՝ Ղրղզստանի Հանրապետությունում ԿԽՄԿ առաքելություն
- Ուզբեկերենի, թուրքմեներենի և տաջիկերենի բաժին՝ Կենտրոնական Ասիայում ԿԽՄԿ տարածաշրջանային պատվիրակություն

Հոդված 3. Մրցույթի հետ կապված բոլոր հարցերը, այդ թվում՝ սույն կանոնակարգից շեղումները, դրանում կատարվելիք փոփոխությունները և մեկնաբանությունները, հաստատվում են մրցույթի կազմակերպչի կողմից։

Հոդված 4. Կազմակերպչի որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն։

ԲԱԺԻՆ 2. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոդված 5. Մրցույթին մասնակցել կարող է էսսեն և սույն կանոնակարգի համաձայն լրացված դիմումը (հավելված 1) ներայացրած ցանկացած ոք՝ անկախ տարիքից, մասնագիտական կարգավիճակից և բնակության երկրից։ Միևնույն անձը կարող է ընտրված լեզվական բաժնի շրջանակներում մրցույթի ներկայացնել միայն մեկ էսսե։ Միևնույն անձի կողմից տարբեր լեզվական բաժիններ էսսե և դիմում ներկայացնելու դեպքում կգնահատվի միայն առաջին ուղարկված էսսեն։

Հոդված 6. Մրցույթին մասնակցությունն անհատական է.կոլեկտիվ աշխատանքներ չեն ընդունվում:

Հոդված 7. Յուրաքանչյուր ոք պետք է ինքնուրույն կազմի էսսեն: Նախկինում հրապարակված աշխատանքները չեն ընդունվում:

ԲԱԺԻՆ 3. ԷՍՍԵԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հոդված 8. Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է գրել էսսե՝ «Ռոբոտները և ՄՄԻ-ն» թեմայով:

Հոդված 9. Էսսեն պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

- Բառերի առավելագույն քանակը՝ առանց ծանոթագրությունների՝ 1000 (ստուգվում է Microsoft Office-ի գործիքներով),
- Շարվածք՝ տառատեսակը՝ Times New Roman, տառաչափը՝ 12,
- Միջտողային բացվածքը՝ մեկուկես
- Ծանոթագրությունների շարվածքը՝ տառատեսակը՝ Times New Roman, տառաչափը՝ 10,
- Էջի տողերի լայնությունը՝ 2 սմ՝ ողջ տրամագծով,
- Աշխատանքները պետք է բնօրինակ լինեն. գրագողությունը և առանց հեղինակին նշելու այլ մեջբերումներն ու փոխառությունները չեն ընդունվի:

Հոդված 10. Էսսեն պետք է գրված լինի հայերեն, ռուսերեն, ուկրաիներեն, ադրբեջաներեն, ղազախերեն, ղրղզերեն, ուզբեկերեն, թուրքմեներեն կամ տաջիկերեն լեզվով:

Հոդված 11. Արդեն ուղարկված էսսեի մեջ փոփոխություններ չեն ընդունվում:

ԲԱԺԻՆ 4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ

Հոդված 12. Էսսեն և դիմումը մեկ էլեկտրոնային նամակով՝ Microsoft Word ձևաչափով երկու առանձին ֆայլով պետք է ուղարկվեն icrc.competition@gmail.com հասցեով՝ `նշելով լեզվական բաժինը և մասնակցի անունը և ազգանունը նամակի վերնագրում (օրինակ՝ հայերեն, Պողոսյան Պողոս):

Հոդված 13. Ֆայլերի անվանման վերաբերյալ պահանջներ.

1) Էսսեի ֆայլը պետք է պարունակի մասնակցի անունը, ազգանունը և ստորակետով առանձնացված «էսսե» բառը (օրինակ՝ Պողոսյան Պողոս, էսսե):
2) Դիմումի ֆայլը պետք է պարունակի մասնակցի անունը, ազգանունը և ստորակետով առանձնացված «դիմում» բառը (օրինակ՝ Պողոսյան Պողոս, դիմում):

Հոդված 14. Աշխատանքների ընդունման վերջնաժամկետը՝ 30 հունիսի 2021 (ժ. 20:00, UTC):

ԲԱԺԻՆ 5. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Հոդված 15. Էսսեները գնահատվելու են հետևյալ չափանիշների հիման վրա.

- Գաղափարի օրիգինալություն և հիմնավորվածություն,
- Էսսեի բովանդակության համապատասխանություն մրցույթի հայտարարված թեմատիկային,
- Միջազգային մարդասիրական իրավունքի իմացություն,
- Սկզբնաղբյուրների հետ աշխատելու կարողություն և գիտական մեջբերման կանոնների պահպանում,
- Սեփական դիրքորոշումը հիմնավորելու կարողություն,
- Ճշգրիտ և հստակ ձևակերպումներ և շարադրման ոճ:

Հոդված 16. Սույն կանոնակարգը խախտած մասնակիցները կարող են կազմակերպիչների որոշմամբ հեռացվել մրցույթից:

ԲԱԺԻՆ 6. ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ և ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Հոդված 17. 2021 թ.-ի սեպտեմբերի 1- ին կազմակերպիչը կհայտարարի մրցույթի արդյունքների մասին և էլեկտրոնային փոստով կուղարկի տեղեկությունը բոլոր մասնակիցներին: Մրցույթի մասին ողջ տեղեկատվությունը կհրապարակվի ԿԽՄԿ-ի կայքում:

Հոդված 18. Ներկայացված էսսեների քանակից և որակից կախված՝ մրցույթի բաժինների համակարգողները իրավունք են վերապահում իրենց հայեցողությամբ առանձնացնելու մրցույթի անվանակարգերը: Անվանակարգերի մոտավոր ցանկը ներկայացված է կանոնակարգի հաջորդ հոդվածում:

Հոդված 19. Մրցույթի հաղթողները և մրցանակակիրները կարող են ընտրվել տարբեր լեզվական բաժիններից՝ մի քանի անվանակարգերով.

- Լավագույն աշխատանքը դպրոցականների շրջանում,
- Լավագույն աշխատանքը ուսանողների շրջանում,
- Լավագույն աշխատանքը երիտասարդ հետազոտողների շրջանում,
- Լավագույն աշխատանքը դասախոսների և (կամ) գործող մասնագետների շրջանում,

Հոդված 20. Մրցույթի բաժինների համակարգողների որոշմամբ՝ մրցույթի հաղթողներին և մրցանակակիրներին կարող են հանձնվել հետևյալ մրցանակները.

- Տարածաշրջանային ԿԽՄԿ միջոցառումներից մեկին մասնակցության հրավեր և հարակից բոլոր ծախսերի փոխհատուցում,
- Միջազգային մարդասիրական իրավունքի մասին գրականություն,
- Աջակցություն գիտական հրատարակչությունում հրապարակման հարցում,
- Մրցույթի բաժինների համակարգողների հայեցողությամբ՝ միջազգային մարդասիրական իրավունքի ամառային դպրոցներից մեկին մասնակցության ծախսերի փոխհատուցում,
- Մրցույթի բաժինների համակարգողների հայեցողությամբ այլ մրցանակներ:

Հոդված 21. Բացառիկ որակի աշխատանքների առկայության դեպքում, մրցույթի կազմակերպիչների որոշմամբ, հնարավոր է նաև սուպերմրցանակի հանձնում՝ աջակցություն Կարմիր խաչի միջազգային ամսագրում էսսեի հրապարակման հարցում՝ անհրաժեշտության դեպքում անգլերեն թարգմանությամբ (Cambridge University Press, Scopus):

ԲԱԺԻՆ 7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 22. Էսսեն և դիմումը ուղարկելիս մասնակիցն այդպիսով համաձայնում է դիմումի մեջ նշված անձնական տվյալների՝ գործող ազգային օրենսդրության համաձայն մշակմանը, ինչպես նաև ներկայացված նյութերի, այդ թվում՝ էսսեի ԿԽՄԿ-ի կայքում հրապարակմանը: Անձնական տվյալների պաշտպանության նպատակով մասնակիցը տեղեկացվում է, որ տվյալները հավաքվում են հետագայում նրա հետ կապ հաստատելու և կանոնակարգին վերջինիս համապատասխանությունը որոշելու նպատակով: Մասնակցի գրավոր դիմումի հիման վրա նրա անձնական տվյալները կարող են հեռացվել մրցույթի կազմակերպիչների տվյալների շտեմարանից:

ՄՐՑՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

30 հունիսի 2021. Մրցութային աշխատանքների ներկայացման վերջնաժամկետ:

1 սեպտեմբերի 2021. Մրցույթի հաղթողների և մրցանակակիրների հայտարարում ԿԽՄԿ-ի կայքում՝ **https://www.icrc.org/ru/what-we-do/building-respect-ihl/education-outreach:**

Ինչպես դիմել մրցույթին մասնակցելու համար

Փաստաթղթերի փաթեթը պետք է ուղարկել icrc.competition@gmail.com էլեկտրոնային հասցեին մինչև 2021 թ.-ի հունիսի 30-ը ներառյալ:

Նամակի վերնագրում անհրաժեշտ է նշել լեզվական բաժինը և մասնակցի անունը և ազգանունը (օրինակ՝ հայերեն, Պողոսյան Պողոս):

Փաստաթղթերի փաթեթը պետք է ներառի.

- 1 դիմում (հավելված 1),
- 1 էսսեի ֆայլ՝ կազմված սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան:

Ներկայացվող ֆայլերից յուրաքանչյուրի անվանումը պետք է ներառի մասնակցի անունը և ազգանունը, ինչպես նաև ստորակետով առանձնացված «էսսե» բառը (օրինակ՝ «Պողոսյան Պողոս, էսսե», «Պողոսյան Պողոս, դիմում»): Բոլոր դիմումները պետք է լրացվեն տպագիր ձևով:

Մրցույթի կանոնակարգի

Հավելված 1

Դիմում

Անուն, ազգանուն, հայրանուն	
Ծննդյան ամսաթիվ	
Բնակության երկիր և քաղաք	
Մասնակցի կարգավիճակ (աշակերտ, ուսանող, ասպիրանտ, դասախոս, և այլն)	
Կուրս և ուսումնառության ոլորտ (եթե կիրառելի է)	
Ուսումնական հաստատություն, բաժին/ ինստիտուտ/ կազմակերպություն (եթե կիրառելի է)	
Էլեկտրոնային հասցե	
Կոնտակտային հեռախոսահամար	
Ինչպե՞ս եք իմացել մրցույթի մասին:	
Արդյոք համաձա՞յն եք, որ Ձեր անձնական տվյալները մշակվեն, պահվեն և օգտագործվեն կանոնակարգի հոդված 22-ի համաձայն:	

Սույն դիմումը ներկայացնելով՝ Դուք հաստատում եք, որ մանրամասնորեն ծանոթացել եք մրցույթի կանոնակարգին և համաձայն եք մասնակցելու մրցույթին՝ կանոնակարգի համաձայն: